

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէց)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱՅ 1899 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«ՄՇԱԿԻ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻՆ ՆՈՅՆ ՊՐՈԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամբիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Սւրբույայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ԽՐԱՏԱՐԱՄՄՈՎ (Բաղրամյան և Բարոնակյան փողոցների անկիւն): Կայքերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աւետեաց երկիրը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժանտարտը. Մատենագրութիւն. Նամակ Նոր-Նախիջևանից. Նամակ Իրիջանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոր ուղղութիւն. Արտաքին լուրեր.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Պարսկաստանից:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՐՍԱԿԱՆ ՍՏԱՆԻՑ

Թաւրիզի անգլիական ընդհանուր-հիւպատոս Վուդ այս աշուն ևս կատարեց իր սովորական ճանապարհորդութիւնը դէպի Ուրմի և չըջկա-ները, ուր կան անգլիական հպատակներ և ա-մերիկացի միսիօնարներ և նրանց հաստատու-թիւնները, որոնք ենթարկված են Անգլիայի հիւ-պատոսարանի պաշտպանութեանը: Պ. Վուդ Ուրմիում էր գտնվում այն քաղաքին, երբ Սալ-մաստի Մահադի գիւղի մի այգու մէջ 6—700 քրդեր և պարսիկ սարկազներ՝ դատաւոր Զար-գամ-իւլ-Մուշքի տնօրէնութեամբ և իր օգնա-կան Մահադիի գիւղատէր Հալի-Խանի ներկայու-թեամբ՝ զլխատում էին Մոկայի, Շատախի և Ուզբիջի 9 անմեղ թիւրքաճայերին: Դէպքը և Սալ-մաստի վիճակը նշխարական տեղեկագրվեց պ. հիւպատոսին՝ հիւպատոսի թարգման՝ Նոր-Ձու-ղայիցի Գալուստ-խան Վարդանեանի կողմից: Թէպէտ և պ. Վուդի մարշըրուտին էր, այնու ամենայն թարգմանի և ծառա-ների հետ փութեց Սալմաստ, նախապէս հե-ռագրով յայտնելով Քէհրանի անգլիական դես-պանատանը: Կոտորածի երկիւղը և առհասարակ կեղեքումներն ու սարսափը մեծ էր, երբ պ. Վուդ մտաւ Սալմաստ: Դատաւոր Հաֆթվանի հայ քահանայից 70 թուման անիրաւի տուգանք էր առել: Հիւպատոսն ազատեց քահանային և յետ դարձնել տուեց տուգանքը: Պ. Վուդ ան-ստուգեց այն ամեն չարիքները, որ կատարվել են և տակաւին կատարվում են Սալմաստում՝ դատաւոր Զարգամի և Սարխարատի ձեռքով: Զարգամ-իւլ-Մուշքն այցելեց անգլիական հիւպա-տոսին, բայց այդ այցելութիւնը անցաւ շատ տխուր. հիւպատոսը սաստիկ անպատուեց Զար-գամին, յանդիմանեց ու երեսին չարտեց երկրի:

ԱՌԵՏԵԱՑ ԵՐԿԻՐԸ

Դեռ նոր հեռացան թիւրքաց զօրքերը Կրեմի կղզուց, և ահա՝ գալիս են լուրեր, թէ կրեմայի մահապաշտները, չը կամե-նալով ըրիստոնեայ նահանգապետի իշխա-նութեան տակ գտնվել, անտես անելով եւրոպական ծովապետների տուած հանդի-սաւոր և զրական խոստումները, մեծ խըմ-բերով գաղթում են Փոքր-Ասիա: Գաղթա-նեկայ վիճակը և անմեղ հայերի կրած չարա-րանքները Զարգամի և անխղճ պաշտօնեաների կողմից: Բարբարոս դատաւորը ոչ մի պատաս-խան չը համարակցեալ տալու, և ինչպէս հաս-տատում են՝ Զարգամը քիչ էր մնում ուշա-թափ լինի, եթէ օգնութեան չը հասնէր մի ա-տորի բժիշկ, այնքան դառն էին զայրացած հիւ-պատոսի խօսքերը: Պ. Վուդ փոխադարձ այցե-լութեան չը գնաց դատաւորին. Վն չը պէտք է այցելեմ դահիճ-դատաւորին, որը անգլիացի մորթիտեղ տուեց կամովին անձնատուր եղող անմեղներին, ատում էր նա, երբ որ յիշեցնում էին պ. Վուդին փոխադարձ այցելութեան մա-սին, սակայն համաձայնեցաւ միայն իր թարգ-մանին ուղարկել դատաւորի մօտ՝ յարգած լի-նելու համար քաղաքական ձևերի պատշաճու-թիւնը:

Սալմաստի հայերը հիւպատոսին յայտնեցին փոխ-առաջնորդ Թալիկ վարդապետի սկսած ու-սումնարանի և առաջնորդարանի շինութեան մասին, որի համար Զարգամը կաշառք էր ուղել Դաղեան վարդապետից և մերժելուց յետոյ՝ արգելել էր տուել չէքի շարունակութիւնը, համարելով այդ հրոսակալութեան բերդեր և այլն: Հիւպատոսը իր թարգմանի միջոցաւ վեր առաւ չէքի յատակագիծը, և միանգամայն խորհուրդ տուեց հայերին պատահած բոլոր չարիքների համար դիմել ուղղակի Շահին, խոստանալով որ իր կողմից անհրաժեշտ օգնութիւնները կը լի-նեն: Թոյի և Սալմաստի դատաւոր Զարգամի և իր օգնական Հալի-Խանի դրոժ դրած աղէտները Սալմաստեցիների գլխին անհամար են: Յայտնի է Մշակի ընթերցողներին, թէ ինչքան վեհաւեր ու չարիքներ է հասցրել պարսիկ կառավարու-թեան Շիքաք քուրդ էլավի ցեղապետ Մամէդ աղան, որի հետ Զաֆէր Սալմանին զօրքերով ու թնդանօթներով կուեց, որը պարսիկ կառա-վարութեան վրա նստեց 24,000 թումանից ա-ւել մի գումար: Այս տարի չորհիւ Զարգա-մ-իւլ-Մուշքի, յիշեալ Մամէդ աղայի որդուն՝ Զա-ֆար աղային յանձնուած է 300 ռուբլի ձիւտը-նեկով հսկել սահմանի վրա և պահպանել Սալ-

կանութեան սկիզբ դրել է հարուստ, կա-լուածատէր դասը: Նա լաւ գներով վաճա-ռում է իր ստացուածքը և գնում է իր ապրուստը հաստատելու այնպիսի երկրում, ուր կիսալուսնի տիրապետութիւնը ո՛ր և է կասկածի չէ ենթարկված: Նա որովհետեւ ապահովված դասակարգն էր, որ ներկայա-ցնում էր մահապաշտութեան ոյժը, ուստի, նրա գաղթելուց յետոյ, միւս դա-սակարգներն էլ կը հետեւն նոյն օրինակին: Նա եթէ նկատի առնենք, որ Կրեմիում 93,000 մահապաշտներ կան, հասկացո-ղութիւն կը կազմենք՝ թէ գաղթական ինչ հեղեղներ կարող են իջնել Փոքր-Ասիայի ափերում:

Այս երկնքը նոր չէ: Մահապաշտու-թիւնը կամաց-կամաց դուրս է մղվում Սե-րոպայից և մի շարք պատմական փաստե-րից արդէն հասկացել է որ իր հայրենիքը արեւմտեան Ասիան է: Այդ երկիրը միշտ մի առանձին ձգողական ոյժ ունէր մահա-պաշտի ցեղերի համար: Երբ վերջացաւ Կովկասեան պատերազմը, հարիւր հազար լեւոնցիներ, թուրքերով իրանց երկիրը, սարսափելի տանջանքներ կրելով, գաղթե-ցին Թիւրքիա: Իսկ երբ Բոլշարիան ազա-տվեց, այդտեղից էլ մի շատ խոշոր գաղ-թականութիւն անցաւ Բաֆօրի ասիական ափը: Մնալ իր հայրենիքում, ուր փոխված էր իշխանութեան կարգը, կը նշանակէր ընդունել հաւասար իրաւունքներ և պար-տականութիւններ ճանաչող հպատակի դիրքը: Բայց այդ բանի հետ չէ հաշտվում մահապաշտները. նա ուզում է այնպիսի տեղ, ուր իսլամը պատաստած ունի նրա հա-մար տիրապետող զինուորական դասակար-գի արտօնութիւնները: Անկախ իսլամու-թիւնը դարերով հասկացրել է իրան հե-տեւորներին, թէ մահապաշտ լինել՝ չէ

նշանակում՝ աշխատաւոր հպատակ լինել. այդ պարտաւորութիւնը դրված է միայն գետիկների վրա: Նա ահա, ամեն անգամ, երբ փոխվում է այդ հասկացողութիւնը նուիրագործած կարգը, մահապաշտներ իր պարտն է համարում փախչել դէպի Փոքր-Ասիա, իր անտեսեց երկիրը...:

Ի՞նչ են մոյցնում այդ գաղթող տարրե-րը անտեսեց երկրի՝ մէջ:—Ի հարկէ, ոչ կուտուրական աշխատանք, ոչ ժամանա-կակից արդար հասկացողութիւններ իրա-ւունքների, հաւասարութեան մասին Ա-մեն կողմից նրանք ներս են բերում իրանց միակ պարզ և հասկանալի իրաւունքը—մահապաշտ կրօնի տիրապետութիւնը: Ամենքին հարկաւոր է վայելել արտօնու-թիւններ, լինել հրամայող, կարգադրող, առնել, հարստահարել: Նա ո՛վ պիտի բաց անէ նրանց առաջ այդ արտօնութիւնների համար լայն ասպարէզը:—Ի հարկէ Փոքր-Ասիայում ապրող ոչ-մահապաշտ տար-րերը: Պէտք է նկարագրել թէ ինչ զգաց-մունքներով են ներս մտնում գաղթական-ները իրանց անտեսեց երկիրը, բաւական է յիշել, որ նրանք փախչում են անհա-ւատներէ: Երեսից, որոնց համարում են իրանց թշնամի և հայածիշ լոկ այն պատ-ճառով, որ այդ անհաւատները չը թո-ղեցին նրանց հարստահարող դասակար-գի արտօնութիւնները պահպանել կամ Կով-կասեան լեւոններում: Նրանք մի անսահման ատելութիւն են տածում դէպի այն ան-հաւատները, որոնց պատճառով զրկվեցան իրանց հայրենիքից: Այստեղից առաջանում են այն փոխալի տանջանքները, որոնց մէջ խորովվում է Փոքր-Ասիայի ոչ-մահ-պաշտական ազգաբնակչութիւնը:

Ներպան երեք տարվայ դաժան աշխա-

րամայել իր հետևորդներին... որոնք հարիւրա-պետին զինավաճի անելուց յետոյ, մի լաւ թա-կեցիւն եթէ նա գիտնալով հանդերձ, որ հիւ-պատոսը պաշտօնական անձն է, դեռ էլի ու-զում էր բռնութեամբ փող խել նրանից, հաս-կանալի է ինչեք չի անի հասարակ ճամբորդ-ների հետ: Ամբողջ մի տարուց աւելի է, որ կո-ղպտում ու թալանում են անպատիժ. դեռ եր-կու ամիս առաջ յիշեալ դարասօրանները կո-ղպտեցին թաւրիզի Հայունհայ Բարեգործական ընկերութեան երկու ուսուցիչներին, երբ Սալ-մաստ էին գնում: Պ. Վուդ նահանգապետ Ա-միր-Նիզամին ծանր լեզուով հաղորդեց բոլոր տխուր պատահարները, ինչպէս նաև դարասօ-րանների կեղեքող վարժանքը, և մասնաւորա-պէս չեղեց, թէ երբ մեր կողմից մերթ ընդ մերթ բողոքներ են եղել, յանցաւոր են համար-վել անցորդները: Եթէ իմ անձի հետ, ասել է նա, այդպէս են վարվում, ինչեք չեն անիլ հա-սարակ ճամբորդներին:

Ինչպէս ատում են, անգլիական հիւպատոսը վճռել է Ուրմիայում հաստատել տալ փոխ-հիւ-պատոսութիւն. իսկ Թոյ-Սալմաստում հիւպա-տոսական աղէտներ:

Գրված է արդէն Մշակին՝ Սալմաստի փոխ-առաջնորդ Թալիկ վարդապետին թաւրիզ բեր-վելը, իբրև ամբաստանված անձն: Սկզբում Ա-միր-Նիզամը շատ գէշ վարվեց նրա հետ, չուղե-նալով անգամ իր ներկայութեան ընդունել և նշանակեց ընտելութիւն քեար-գիւղարի մօտ: Ու-պէս պատասխան Ամիր-Նիզամի գրութեան՝ Կա-թոլիկոսը գրել և պահանջել էր Դաղեան վար-դապետի վերադարձը: Ամիր-Նիզամը համոզվե-լով, որ այդ վարդապետի մասին հաղորդվածնե-րը զրպարտութիւններ են, ընտելութիւնը ևս ա-ղատեց և արտօնեց, որ վերադառնայ իր պաշ-տօնատեղին:

Այս օրերս Զարգամը՝ Սալմաստի պաշտօնակ դատաւոր և իր օգնականը սպառվում են Թաւ-րիզում. արդեօք անպատիժ պիտի մնան Սալ-մաստն աւերողները... W.

տուեթիւններն գնով. վերջապէս, ազատեց
Կրետէն: Բայց թիւրքերին Եւրոպայից վը-
ռնդեղով չէ լուծվում: արեւելեան հարցը,
այդ վաղուց հաստատված ճշմարտութիւն
է: Ի՞նչ միջոցներով Եւրոպան կարող կը
լինի հաստատել մի այնպիսի դրութիւն,
որ մէկի համար աւետեաց երկիր դարձածը
միւսի համար դժուր չը դառնայ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ժ Ա Ն Տ Ա Խ Տ Ը

I

Այժմեան ժամտախտային համաճարակը մի
խիտ սպառնալից դիւր է բռնել և այլ ևս ան-
խոհեմութիւն կը լինէր փակել մեր աչքերը ակ-
նեղ փոստի առաջ: Նստ կարելի է և նոյն
խակ հաւանական է, որ այդ համաճարակը չանց-
նի թուրքեստանի սահմանները, բայց ոչ որ չէ
կարող երաշխաւորել, որ նա մի օր չի մտնի
մեր երկիրը: Այսպիսի խնդիրներում պէտք է
ամենավաղ ի նկատի ունենալ և երկու ական-
ջի վրա չը ընել, է՛հ, անկող, ինչպէս այդ յա-
տուկ է մեզ՝ դանդաղ, անհոգ արեւելցիներս:

Թուրքեստանի (Սամարկանդ) ժամտախտի
սկզբը, ըստ օտար աղբիւրների՝ սեպտեմբերին
է եղել, երբ սկսել են երեւել հիւանդութեան ա-
ռաշխի դէպքերը, իսկ հոկտեմբերի 8-ից ժամ-
տախտի գոյութիւնը և տարածվելը ուստապատ-
կան այս նահանգում արդէն ճանաչված է պաշ-
տօնապէս գնահատելու համար: Գնահատումով:
Առաջին անկասկածելի դէպքերը տեղի են ունե-
ցել Պէշվերէնի նահանգում, Իսկէնդէրկիւլ և
Նուրաթիւմ գաւառում: Այստեղ, Մարցին գիւ-
ղում մի կին մեռնում է անյայտ հիւանդութիւ-
նից: Մօտակայ Անգոր գիւղի մի բնակչուհի լո-
ղացնում է մեռածին, թողում է և վերադառ-
նալով իր գիւղը, իսկոյն հիւանդանում է ու ե-
րեք օրեց յետոյ մեռնում: Այս կնոջ ազգական-
ները չափերը, նոյնպէս և օտար անձինք վա-
րակվում են և մեռնում, և հիւանդութիւնն սկը-
սում է տարածվել գիւղի մէջ: Տղէտ և Քանա-
տիկոս մահանդակն ժողովուրդը այստեղ ևս,
ինչպէս և ուրիշ համաճարակներում, իր տղի-
տուեթիւնով աւելի ևս բարդեցել է հիւանդութիւ-
նը: Ամբողջ, հիւանդութեան տարածվելը վե-
րադրելով Աստուծո թաղութեանը, մի ոմն
Աջլուր-Բիբիի՝ առանց խիտ ծիսակատարու-
թեան թաղման համար, փորում են այդ մար-
դու գերեզմանը: Այնուհետև ժամտախտը բռն-
կում է և կոտորածը սաստկանում: Վառապա-
րութիւնը, թէ՛ և քիչ ուշ, բայց խիտ միջոցներ
է ձեռք առնում համաճարակը սահմանափակե-
լու, կօրդօն դնելով այս գիւղի շուրջը, այրե-
լով հիւանդների իրեղէնները, մաքրելով և ախ-
տահանելով գիւղը և բժշկական հսկող կայարան-
ներ սահմանելով՝ միւս գիւղերի հետ ամեն տե-
ւալ յարաբերութիւն կտրելու համար: «PRAVET,
BETH» լրագրի պաշտօնական տեղեկութիւննե-
րին նայելով՝ վարակված տեղի (Անգոր գիւղի)
շուրջը երեք շրջայ հսկող կայարաններ են
հիմնված, և խիտ հսկողութիւն է սահմանված
Բուխարայի և Ամու-Դարիայի սահմանների
վրա, այս երկիրը վարակումից պաշտպանելու
համար: Բացի Անգրկասպեան երկաթուղային
ամբողջ գծի վրա, Սև ծովի ափերում թէ՛ Պար-
սից (Էնդելի, Աստարա, Գեալ) և թէ՛ Եւրասիաց
նաւահանգիստներում, օրինակ Բաղուում՝ հիմն-
ված են բժշկական-հսկող կայարաններ և կա-
րանտին: Այսպիսով Սամարկանդը (վարակված
երկիրը) անջատված է թէ՛ Բուխարայից, թէ՛
Պարսկաստանից և թէ՛ Անգրկասպեան և Վաս-
պուրան երկրներէ: Բացի դրանից, միջոցներ են
ձեռք առնված, որ նոյնպէս իսկոյն շրջային նաև
այն երկրները, ուր կանցնի ժամտախտը, և ե-
թէ ընթերցողը մի հայեացք գցի յիշած երկրնե-
րի քարտէզի վրա, կը տեսնի, որ ժամտախտը
մի մեծ տարածութիւն պիտի անցնի և շատ
շրջաններ պիտի փչի: մինչև մեզ հասնելու:

Այս բոլոր հակամատախտային միջոցներն,
ի հարկէ, ահազին նշանակութիւն պիտի ունե-
նան մեր երկրին սպառնացող վտանգից ազատ
պահելու համար, բայց նրանք ապահովութիւն
չեն կարող լինել, որովհետև ժամտախտը յաճախ
խիտ կորցնողներ և կարանտինների միջով էլ է
անցնել: Ճիշդ է, ժամտախտի տխուր պատմու-
թեան մէջ եղել են շատ դէպքեր, ուր խիտ
կորցնող սահմանափակել է հիւանդութեան տա-
րածվելը և խեղդել են նրան տեղի ու տեղը:
Այսպիսից Վեդեանկայի (Աստրախանի մօտ)
1879 թվի ժամտախտը, որը առաջինը ճանաչեց
յայտնի բժիշկ Բօսկին, և որը տեղի ու տեղը
հանգրվեց չորսիւ Լօրիս-Մեկըբանի ձեռք ա-
ռած խտառոյն միջոցների: Այստեղ գործ էին
գրվել, ծայրայեղ խտութեամբ, կորցնող և կա-

րանտինի աւանադու միջոցները: Սակայն
Վեդեանկայի համաճարակը մի փոքր բռնկում
էր, վարակված երկրի սահմանները շատ փոքր,
ինքը հիւանդութիւնը թոյլ, երթնեկութիւնը կա-
րելի էր դադարեցնել, ճանապարհները փակել և
այնն. բայց երբ համաճարակը բռնել է արդէն
ընդարձակ տարածութիւններ, երբ հաղորդակ-
ցութիւնը հարեան երկրների հետ անհար է
կտրել, երբ ժողովուրդը (ինչպէս է թուրքեստա-
նի, Բուխարայի և Պարսկաստանի և նոյն իսկ
Անգրկասպեան մահանդակն ազգաբնակչու-
թիւնը) լի է նախապաշարմունքներով, հակա-
ցողութիւն չունի առողջապահական կանոննե-
րից, չէ հաւատում վարակման, երբ անհար է
շղթայել երկիրը, կտրել առևտուրը, այդպիսի
պայմաններում ոչ կորցնող և ոչ կարանտինը
չեն հասնում նպատակին, իսկ մի քանի բժիշկ-
ների կարծիքով՝ նոյն իսկ վնասակար պիտի հա-
մարվեն: Նրանք վնասակար են առևտրական
տեսակէտից, վնասակար են և անխոյարհելի
նաև նրանցով, որ շղթայելով վարակված տեղերը
և թոյլ չը տալով առողջներին հեռանալ, նրանց
էլ դատապարտում են վարակման, մի բան, որի
դէմ բողոքում է մարդու խիղճը: Կորցնող առ-
հասարակ սարսափ է ազդում ազգաբնակչութեան
վրա, և շատ յաճախ խռովութիւններ և նոյն իսկ
զինուորները դիմադրութիւն է գտնում, հազուա-
գիտ չեն ապստամբութիւններ շղթայած եր-
կրներում, որը անկարելի է դարձնում կորցնող
պահպանելու: Վերջապէս սարսափի մէջ ընկած
ամբողջ միջոց հնար կը գտնի միայն իրան
յայտնի անցքերով փակել կորցնող միջով և
իր հետ վարակել թոյլը միւս երկրներ մտցնել:
Այսպիսով կորցնող ցամաքի վրա չի հասնում
իր նպատակին: Աւելի աղու միջոց է կարան-
տինը ծովեզրեայ երկրներում. կարանտինը կա-
յանում է նրանում, որ ծովով եկած մարդիկ
պահվում են նաւերում մի օրոշեւ ժամանակ
(օրինակ 10—20 օր). ներս են առնվում միայն
այն դէպքում, երբ յիշած ժամանակամիջոցին
նախ մէջ չեն լինում հիւանդութեան դէպքեր:
Այս միջոցը նպատակադարձ է և չորսիւ կա-
րանտինի է, որ Կ. Պօլսի նման կեդրոն թա-
ղակը համարեա միշտ ազատ է պահել խօշ-
բայի համաճարակներից: Սակայն կարանտինը
անապին նրկական վնասներ է հասցնում երկ-
րին և կառավարութիւնները յօժարութիւնով
չեն մտցնում իրանց նաւահանգիստներում: Օրի-
նակ, Անգրկասպեան երեք չի համաճայնել կա-
րանտին մտցնել Հնդկաստանից (խօշբայի և
ժամտախտի այս բնից) Լօնդօն եկած նաւերի
համար, որովհետև այդ մի ահազին հարուած կը
տար նրա համաշխարային առևտրին:

Բժշկական հսկող կայարաններին ընդհանուա-
կը ահազին ծառայութիւն են մատուցանում
պահպանողական գործին: Այս կայարաններում
բժիշկները հսկում են անցողաբաժն անողների
վրա, երկրի առողջապահական դրութիւնը բար-
ւոյնով, վարակվածներին անմիջապէս անջա-
տում առողջներից, ընդունելով նրանց հիւան-
դանոցներում, ախտահանելով հիւանդի բնակա-
րանը և այլն: Այս կայարանները միշտ
և ամեն տեղ մեծ և վերին աստիճանի համակրելի
դեր են խաղացել համաճարակների միջոցին,
ուստի ժողովուրդը պէտք է համակրութիւ-
նով և հաւատով վերաբերվի նրանց: Ցաւա-
կար է իրապէս նոյն յաճախ և տգէտ մահա-
դական ամբողջ չունի այս հաւատարմութիւնը
և թշնամաբար է վերաբերվում դէպի այս հիւ-
նարկութիւնները և ու ծածկում է բժշկից իր
հիւանդին, պահում է նրան տանը և այսպիսով
նոյն իսկ այս համակրելի հիմնարկութիւնը ան-
զօր է լինում մատուցանող երկրին այն ահազին
ծառայութիւնը, որը նրանից սպասելի է:

Մեր ասածների հիման վրա կարող ենք պնդ-
ել հետեւեալը. Կորցնող, կարանտինը, հսկող-
բժշկական կայարանները գործել միջոցներ են
ժամտախտի տարածումն սահմանափակելու: հա-
մար, բայց նրանք (մահաւանդ խոր ասիական
երկրների մէջ) չեն հասնում իրանց նպատա-
կին և անկարող են կանգնեցնել ժամ-
տախտի արշաւանքը, և թէ՛ ազգաբնա-
կութիւնը ինքը գիտակցօրէն և ա-
ռաքանց նախապաշարմունքի չի վերա-
բերվի դէպի համաճարակը, և չի բա-
րելալ իր առողջական դրութիւնը և սու-
նախորդ յաջող չը լինի իր առօրեայ
կեանքի և յարաբերութիւնների մէջ: Ժամ-
տախտի ուսումնասիրութիւնն այժմ այնքան
զարգացած է, որ մենք այլ ևս խաւարի մէջ
չենք խաբստաւում և գիտենք թէ ինչ է իսկու-
թիւնը, ինչու է վտանգը, որոնք են վարակ-
ման աղբիւրները և որոնք պաշտպանողական
և բժշկական միջոցները և այլն:

Պէտք է համոզված լինել, որ նոյն իսկ
ժամտախտի կենսաբանական մարդ կարող է ան-

երկուդ ապրել, եթէ համոզված կերպով կը հե-
տևի գիտութեան տուած ինքնապաշտպանութեան
հրահանգներին: Բժ. Վ. Արծրունի

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

Փաւստոս Բեզանդացի և իր պատմութեան խաղա-
խոյր: Քննութիւն Մ. խորհրդաւ աղբիւրների մասին:
Գրք. 8. Գաղղաշեան: Վիեննա, 1898: Գրք. 2 Գր. 50:
Եր. 17-172:

(Վերջ) *

Պ. Կաղաշեան բանասիրութիւնը
չիւթում է զաւեշտի հետ:

Պ. Կաղաշեան համեմատելով Փաւստոսի և
Խորենացու տուած կաթողիկոսների ցանկը ու
Լուսաւորչից մինչև Ասպուրակէս՝ նկատում է,
որ Խորենացու մօտ պակասում են երկու ա-
նուն, Ծահակ Ա և Յուսիկ Բ, որոնք երկուսն էլ
Աղբիւնոս եպիսկոպոսի ցեղիցն են ըստ Փաւս-
տոսի: Յայտնի է որ Հայաստանում ժառանգա-
կան էր ինչպէս թագաւորութիւնը՝ նոյնպէս և
կաթողիկոսութիւնը. բայց երբ Լուսաւորչի տոհ-
մից յարմար անձ չէր լինում կաթողիկոսացնե-
լու՝ ընտրում էին ուրիշ տոհմից: Արդ. պ. Կաղ-
աշեան ասում է. «Այս նկատմամբ Լուսաւորչի
տանը արեւեան էր հանդիսանում Աղբիւնոս
եպիսկոպոսի տունը... Խորենացին իբրև ցեղա-
նաւոր պաշտպան Լուսաւորչի տան կաթողիկո-
սութեան, չէ կամեցել յիշել Աղբիւնոսի տան
բոլոր կաթողիկոսներին, որպէս զի Աղբիւնոսի
տունը ընթերցողի աչքում արեւեան չը հանդի-
սանայ Լուսաւորչի տանը: Ըստ մեզ այսպէս
պէտք է բացատրել այն հանգամանքը, որ Խո-
րենացին Ծահակ Ա և Յուսիկ Բ անունները
բաց է թողել» (131—133): (Փաւստոս 4 կա-
թողիկոս է յիշում Աղբիւնոսի տոհմից, իսկ Խո-
րենացին միայն 3.—Խորենացին Ասպուրակէսին
ևս կոչում է Աղբիւնոսեան—Գ, ԽԱ. բայց պ.
Կաղաշեան այս բանը ձեռնացել է իւր ցան-
կում նշանակել: Եստ լաւ: Բայց մի հանգա-
մանը մեզ թոյլ չէ տալիս համաձայնել պ. Կաղ-
աշեանի հետ, այն է որ Ծահակ Բ. կաթողի-
կոսին, որին Փաւստոսը Կործեայ է անուա-
նում՝ Խորենացին անուանում է Աղբիւնոսեան:
Դուրս է գալիս մի անբացատրելի հակասու-
թիւն. մի կողմից Խորենացին, ըստ պ. Կաղա-
շեանի, պակասեցնում է գոյութիւն ունեցող կա-
թողիկոսների թիւը Աղբիւնոսի տանից, որպէս
զի Լուսաւորչի տանը արեւեան չը հանդիսանան,
և միւս կողմից աւելացնում է նրանց թիւը, մի
ոչ-Աղբիւնոսեան գովելի կաթողիկոսի Աղբիւ-
նոսեան կոչելով: Այս հակասութիւնը բացատ-
րում է պ. Կաղաշեանը այսպէս.— risum tenea-
tis?—«Խորենացին կարծես կամենալով Փաւս-
տոսից տարբերուել, Ծահակ Կործեային կոչում
է Աղբիւնոսեան» (133): (Եւ ուրիշ անուն չը
գտաւ այդ Խորենացին): Եւ այսպիսի կարծի-
քներ, որոնք զուցէ զաւեշտական թերթերում տեղ
ունենային իբրև ծայրաշարժ նիւթ՝ մեզ տուում
են իբրև գիտութիւն, իբրև բանասիրական հե-
տազօտութիւն:

Պ. Կաղաշեան հակասում է ինքն
իրան:

Փաւստոսի վկայութեամբ՝ հայոց կաթողի-
կոսներից 4-ը ձեռնադրուել են Կեսարիոյ արք-
եպիսկոպոսին, Ս. Լուսաւորչի ժամանակից
մնացած սովորութեամբ. իսկ Խորենացին այս
հանգամանքը չէ յիշում: Թէ ինչու՝ այդ բա-
ցատրում է պ. Կաղաշեանը:—«Խորենացին այն
տկարամիտ մարդկանց նախապէս է, որոնք
այս հանգամանքի մէջ, այսինքն որ Լուսաւորչի
յաջորդները մի քանիսը Կեսարիայում եպիս-
կոպոսական ձեռնադրութիւն ստացան, մի տե-
սակ նուազութիւն են նկատում հայրապետա-
կան ավուր համար: Դուրս համար և Խորենա-
ցին վերադառնալ 4 կաթողիկոսների Կեսարիայ-
ում ձեռնադրութիւն ստանալը լուրջեան է
մատնում (133—4): Մի քիչ յետոյ պ. Կաղ-
աշեան մէջ է բերում Գէլցերի մի կարծիքը,
թէ Հայաստանում կաթողիկոսական խնդրում
երկու կողմնակցութիւն է եղել, մէկը թագաւո-
րական տան՝ յօգուտ Աղբիւնոսեան հանդակա-
տար կաթողիկոսների, և միւսը կղերական շըր-
ջանի՝ յօգուտ Լուսաւորչի տոհմի: Հոգեւորական-
ները հաւատարմ մնացին սուրբ Գրիգորի տանն
և Կեսարական ձեռնադրութեան սովորութեա-
նը: Ով որ առանց այս յարաբերութիւններն ու-
նենալու» (այսինքն առանց Լուսաւորչի տոհմից
լինելու և Կեսարիայում ձեռնադրուելու) բար-
ձրանում էր քահանայապետական գահը, բարե-
պաշտների աչքում սարգող էր երևում (136):

*) Մեր այս յօդուածի սկզբում («Մշակ», № 201, Եր.
2, սեւ. 3) սող ներքեւից 47) սխալմամբ տպված է,
«և հասել էին շատ ուշ երեւակցութեանց»:
Պէտք է լինի՝ «և հասել էին շատ ուշ երեւակ-
ցութեանց»:

Պ. Կաղաշեան ընդունում է Գէլցերի այս կար-
ծիքը, որը անուանում է «ուղիղ և հանճարեղ»
(135): Բայց անս թէ ինչ է դուրս գալիս Գէլ-
ցերի մեկնութեամբ՝ Լուսաւորչական տան կողմ-
նակիցը պէտք է կողմնակից լինէր և Կեսարա-
կան ձեռնադրութեան. պ. Կաղաշեանի վկայ-
ութեամբ՝ «Խորենացին չի մեռնող պաշտպան
է Լուսաւորչի տան կաթողիկոսութեան» (132).
ուրեմն ըստ պ. Կաղաշեանի՝ պէտք է Խորե-
նացին պաշտպան լինէր և Կեսարական ձեռ-
նադրութեան. այն-ինչ նոյն պ. Կաղաշեանի
վկայութեամբ՝ Խորենացին հայոց կաթողիկոս-
ները Կեսարիայում ձեռնադրուելը լուրջեան է
մատնում:

Երբ կապուցութիւն: Սրանց նման գահա-
րներ դեռ չառ կան պ. Կաղաշեանի ռուսումնա-
սիրութեան մէջ. բայց մեր յօդուածն առանց
այն էլ չառ երկարացաւ: Մեր բերած օրինակ-
ներով, կարծում ենք, բաւականաչափ ապա-
ցուցուց, թէ պ. Կաղաշեան թէ իւր հետու-
թեան չափով, թէ իւր հայեացքներով և թէ մե-
թոյով անպարտաւս և անհամապատասխան է
բանասիրական քննութիւններով պարագիւր, և
նրա այս զբոյրի իսկապէս մի ծաղր է բանա-
սիրութեան վրա: Նա ոչ միայն չէ լուսաբա-
նում Խորենացու պատմութիւնը և նրա անձնա-
ւորութիւնը, այլ և սխալ ու խալ դատողու-
թիւններով աւելորդ շփոթութիւններ է ստեղ-
ծում. չարծում է խնդիրներ, բայց ձեռնհաս չէ
լուծելու: Նոյն իսկ Խորենացու այն յայտնի
կողմնակցութիւնը յօդուտ Բագրատունիների
և ի վնաս Մամիկոնեանների, որի վրա այնքան
յաճախ մատնանիչ է լինում պ. Կաղաշեան՝
նորան միայն նիւթ է տալիս Խորենացուն հայ-
նոյն, այն-ինչ այս երկուքի լուրջ ուսումնա-
սիրութիւնը լոյս կարող էր սփռել մի քանի
կնճառ խնդիրների վրա: Մէկ խօսքով՝ այս
զբոյրը իսկութեան և աշուտութեան անպիսի
անվիճելի ապացոյցներ է տալիս, որ ամբողջա-
պէս կասկածելի է դառնում ընթերցողի աչ-
քում և կորցնում է նաև այն համեմատ նշանա-
կութիւնը՝ որը կարող էր ունենալ իբրև հանե-
մատութիւն Փաւստոսի և Խորենացու պատմու-
թիւններին:

Le style c'est l'homme. Մի բանի
խօսք էլ պ. Կաղաշեանի ոճի և դարձուածքնե-
րի մասին: Մեր յօդուածում պ. Կաղաշեանի
զբոյրից մէջ բերած ցիտատները ընթերցողը
հասկացողութիւն (թէ և շատ թերի) կապմեղ,
թէ ինչ լեզու է բանեցնում հեղինակը Մովսէս
Խորենացու դէմ, մի նոր սկող, անձանթ, ան-
պարտաւս քննադատ՝ հռչակաւոր մատենագիր
դէմ, որ հազարաւոր տարիներ ազգային պատ-
մութեան ուսուցիչ է եղել հայերին, պատմական
գրականութեան տիպար և օրէնսդիր է դարձել
և ազգային գիտակցութեան հզօր գործօններից
մէկն է եղել, որոնց պատճառով իրաւամբ կա-
րող է կոչուել «ազգի բարերար» և հայոց հայոց
պատմութեան: Պ. Կաղաշեանի այս վարձու-
ղիք դէմ շատերն են դրողքել, նոյն-սկ մատուլի
մէջ: Մենք սակայն չենք բողոքում և մեղա-
դրում պ. Կաղաշեանին. նա արտադրել է այն
ինչ որ կարող էր արտադրել իւր կրթութեամբ
և տեմպերամենտով: Մենք մեղադրում ենք Հան-
դէս Ամսորեանի՝ խմբագրութեանը, դէպի որը
իրաւունք ունենը աւելի խտապահանջ լինելու:
Թմբագրութիւնը այսպիսի դրուածքի տեղ տա-
լով «Հանդէս» է չլերում՝ նախ և առաջ վտանգի
է ենթարկել «Հանդէս» տարիներով վատնակած
բարի վարքին, և ապա իրաւունք է նրա ըն-
թերցողներին, համարելով թէ սրանք փողոցայ-
ին ամբոխի ճաշակ ունեն հայնոյանքներ կար-
դալու: Բաւական չէր զբաղձալ, որ ոճին բանի
մը կտորները այդպէս ըլլային».—պէտք էր թող
չտալ այդպիսի ոճ, որ անվայել է լուրջ գրակա-
նութեան մէջ: Ստ. Մայիսեանց

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԻՍ

Հոկտեմբերի 26-ին

Շարունակում եմ հաղորդել իմ տպաւորութիւն-
ները թեմական դպրոցի մասին: Թաղըր ժա-
մին, հոգաբարձու Թօլայեանի և տեսչի հետ գնա-
ցինք լսելու պ. Թանդեանի Քրատեսքէն լեզուի
դասախօսութիւնը, որը վերաբերում էր բայերի
խոնարհման: Ըստ ամենայնի երևում էր, որ ա-
չակերտները լաւ էին հասկացել գաղղիկերէն կա-
նոնաւոր բայերի եղանակները և ժամանակները,
և համեմատելով հայերէնի հետ՝ գիտակցօրէն
խոնարհում և իրանցից օրինակներ էին բերում:
Եւ ուրիշ կերպ չէր կարող լինել, որովհետև պ.
Թանդեան այնքան պարզ ու հասկանալի կեր-
պով էր բացատրում աշակերտներին՝ որ ամենա-
անընդունակ աշակերտն էլ պէտք է նրան հասկա-
նար: Հնչապ նրա Քրատեսքէն արտասանութեան
մաքրութիւնը... հանել էր նրան լսել... Պարզ

լեզուով խօսելու ընդունակութիւնը մի կողմից և մարտի արտասանութիւնն ունենալը միւս կողմից՝ իւրաքանչիւր ուսուցչին դարձնում են անզին զինձ աշակերտները համար: Պ. Փանդեան Նոր-Նախիջևանի սեմինարիայի համար կազմում է այդպիսի մի դասձ, իբրև դասատու Փանդեան ընդ լեզուի:

Հինգերորդ դասին եւս գնացել չորրորդ դասատունը՝ հայոց եկեղեցական պատմութեան դասը լսելու համար: Ուսուցիչը, ինչպէս երևում էր, նախընթաց պատմած դասն էր հարցնում: Աշակերտը պատմում էր Սահակ Պարթևի՝ և նրա հանձարեղ օգնականի՝ Մեսրոպի վրա, որոնց չնորհիւ հայոց ազգը ճնեց հինգերորդ դարի իր փառաւոր գրականութիւնը... Երևում էր, որ դաս պատմող աշակերտը ամենալին կերպ աշխատում էր լաւ պատմել այդ երկու հանձարեղների նիւթաւատ գործունէութեան մասին, սակայն նա չը կարողացաւ ծածկել իր փոքր ինչ անպատրաստ լինելը: Մանաւանդ աճել էր ընկերում աշակերտի սառնասիրտ կերպով պատմելը... Հանձարի վրա խօսողը քիչ թէ շատ պիտի նրանով ոգևորվի, ուստի շատ ցանկալի է, որ աշակերտները սովորեն հանձարեղով ոգևորվել սիրել նրանց ամբողջ սրտով և անշուշտ հետեւել նրանց հանձարեղ օրինակին. ապա թէ ոչ նրանց մասին մեր պատմածը, կամ կարգացածը ինչ նշանակութիւն կարող է ունենալ...

Վեցերորդ դասը՝ երգեցողութեան դասն էր, որ աւանդում էր սարկաւազ Զորեքեան: Կատարութիւնը լինում էր այն սրահում, որտեղ աշակերտները դաստիարակւում էին և ուրիշ ազատ միջոցներին խաղում են: Սարկաւազը կանգնած էր դաշնամուրի առաջ: Գայնաժուրի ետևում էլ չարված էին երկու խումբ աշակերտներ, մինը բաղկացած մեծ աշակերտներից, միւրը՝ փոքրներից: Սարկաւազ Զորեքեան, ինչպէս երևաւ, այնքան է սիրում երաժշտութիւնը, որ դաս տալու ժամանակ ինքն էլ երգում էր, և ոգևորում աշակերտներին: Երկու խմբի մէջ էլ կային լաւ ձայներ: Եթէ միւս երկու խմբերի մէջ էլ այսքան աղող ձայներ լինեն, այն ժամանակ սեմինարիան՝ առանց օտարների՝ կարող է իր աշակերտներից էլ բաւական լաւ քառաձայն երգեցիկ խումբ ունենալ: Սարկաւազ Զորեքեան՝ իբրև հուսու երաժիշտ՝ լիակազմի գործիչ է Նոր-Նախիջևանի թէ սեմինարիայի և թէ հայոց եկեղեցիների համար: Լաւ չէր լինի, եթէ սարկաւազն աշխատի պատրաստել իւրաքանչիւր եկեղեցու համար մի-մի երգեցիկ երկձայն կամ քառաձայն խումբ: Լսեցի, որ ս. Լուսաւորիչ եկեղեցու քառաձայն խումբը՝ ղեկավարութեամբ սարկաւազի՝ շատ լաւ է երգում: Աշխատելու է միւս եկեղեցիներում էլ երգեցողութիւնը կանոնաւորել:

Սեմինարիայից հեռանալուց յետոյ, մի քանի հոգով գնացինք այցելելու արհեստաւորաց ուսումնարանը: Գաւիթը մտնելիս՝ կարացի հըռչակաւոր ազգային բանաստեղծի՝ հանդուցեալ Բաֆայի Պատկանեանի՝ «Բանուկ ձեռքը չի մուրաբ լիակազմին խօսքը... Մարդու սիրտը փառաւորվում է՝ տեսնելով հայ պատանիներին՝ բանուկ ձեռքերով՝ բանելիս... Նոր-Նախիջևանը համարձակ կարող է իր այս արհեստանոցով պարծնել... Մենք, այցելելու հարս, հրաժեշտ տալով արհեստանոցի աշակերտներին, գնացինք ուսումնարանի դասարանները տեսնելու. ամբողջ շինութեան մէջ կարգ ու կանոնը փայլում էր, իսկ մաքրասիրտութեան մասին ոչինչ վատ ասել չէ կարելի: Վերջում մտանք ուսումնարանի դռնապարանը, որտեղ տեսաւ պահարանի վրա, կանխելի կտրու, անխնամ թողնված Բաֆայի Պատկանեանի կիսարձանը: Այդ առիթով ես խնդրեցի մեզ առաջնորդող ուսուցչից՝ մեր հըռչակաւոր բանաստեղծի կիսարձանը ըստ արժանոյն պատկերել, նրան վայելուչ տեղ տալու ուսումնարանում, որտեղ նա երկար տարիներ աշխատել է իբրև տեսուչ...

Սրապիսին բանաստեղծ Սամուէլեան

ՆԱՍԱԿ ԳԻԼԻՋԱՆԻՑ

Նոյեմբերի 5-ին

Տեղական պրիստաւի առաջարկութեամբ՝ սանիտարական խմբեր են կազմված՝ թուով չորս, որոնք պիտի հսկեն Գիլիջանի մարքութեան վրա և առհասարակ պատրաստ լինեն կուլելու վարդապետական բնաւորութիւն կրող հիւանդութիւնների դէմ:

Տանտեղ տարուց ի վեր Գիլիջան թափվեցին մի քանի սովալուկ քրդական ընտանիքներ, որոնք փոքր առ փոքր հաստատվելով Գիլիջանում, սկսեցին բուն տեղական աղքատ բնակիչների ձեռքից խլել նրանց աշխատանքը՝ պարսպելով բեռնակրութեամբ և անասնապահու-

թեամբ: Այժմ բաւական թուով քրդեր կան Գիլիջանում, այնպէս որ փողոցում խաղացող երեխաների կէտը համարեա քրդերի երեխաներ են լինում, որոնցից շատերը տեղական հայերի տարաբով են հագնվում: Բայց նրանից, որ շուկայից յետ մեղեքին գիլիջանցի բնիկ մշակ դասակարգին, քրդերը՝ իրանց բնածին յատկութեամբ, պարագայում են և գողութեամբ, յաճախ գողանալով իրանց կերակրողի ձին, տաւարը, ոչխարը և այլն: Մեր ու քաղցած Գիլիջան մտնելով, քրդերից շատերը այժմ տեր են մի քանի հարկու բուրդիներին, հարկուսուր ոչխարների, այծերի և մի քանի կովերի: Իսկ նրանց կանայք յետևում են մինչև անգամ ժամանակակից մօդային Գիլիջանցիները շատ անգամ են փորձել աշխատել քրդերից իբրև փեսայի տարրից, բայց ամեն անգամ էլ գործին գլուխ անցած անձինք՝ շահաւոր թողական «կարմիր թուամանները» թուլացել են և սուպարելը նորից քրդերին թողել այնպէս, որ ամեն անգամ երբ խօսք է լինում քրդերին դուրս անելու համար, քրդերը բացակայում են՝ ըմբ մի քանի թուամանների գլուխն է ցաւում, հայերը մեզ դուրս անող չեն... Ներկայումս Գիլիջանը քրդերից մաքրելը յանձնված է մի յանձնաժողովի՝ որի անդամներն են՝ Ղ. Կալիբան, Ս. Գեյիսեան և Պ. Ոսկանեան: Նշանդով գործը առաջ են տանում, ըստ երևոյթի քրդերը անս պատրաստ են, դուրս են եկում, բայց... բայց նրանք նորից ձեռնվալ պատրաստութիւններ են տեսնում Գիլիջանում... հաստատվելու համար... Ինչ պատճառ, հարցնում էք չուրաւ: Այն որ մինչդեռ յանձնաժողովի մի անդամը, պատասխանում են, հաստատ իր խօսքին, քրդերին դուրս է անում, միւս երկու անդամները, քրդերից փողով առնելով, զրազ են քաշվել իրանց քուճը ու պոճակը և սուս ու փուս անուշ են անում... և հետևանքը այն է, որ հէնց այսօր էլ նոր քուճը ընտանիքներ են թափվում Գիլիջան:

Արհուս

ՆՆՐԻՒՆ ԼՈՒՐԵՐ

Վոլկանեան Գիլիջանի տեսակէտէն ընկերութեան փոխ-նախագահ իշխան Պ. Գրուզինսկի իր ուղարկած շնորհաւորական հեռագրի փոխարէն ստացել է Մեծ Նիխան Միխայիլ Նիկոլայովիչից հետեւեղ հեռագիրը. «Շնորհակա եմ անձնութեան և յայտնած զգացմունքների համար: Ցանկանում եմ Գիլիջանի տեսակէտէն ընկերութեան զարգացում և առաջադիմութիւն իմ սրտին թանգ երկրի բարօրութեան համար»:

Թիֆլիսի քաղաքային դոմայի վերջին նիստում որոշվեց յետագիւղ ուղարկելու երկու նոր անդամներ ընտրութիւնը մինչև յաջորդ նիստը:

Մեր թղթակցը թաւրիցի հաղորդում է. «Պարագայութեան մաքրելու և հեռադրական վարչութիւնները՝ առնելով նախկին կառավարչի ձեռքից, կապալով տրվեց Պարսկաստանին յայտնի երեք անձնաւորութիւններին՝ Մօիզ-իւ-Միւլ-բին, Կալիբ-Գուլիբին և Սանի-Գուլիբին, 30,000 թուման վերադրումը»:

Թանախտի դէմ կուլելու գործը կազմակերպելու նպատակով Թիֆլիսի քաղաքային դոմայն իր վերջին նիստում ընտրեց մի յատուկ յանձնաժողով, որի անդամներն են ձայնաւոր բժիշկներ՝ Փոյարեանց, Բաբոյ, Եւսպարեանց, Վե. սելովգորով և Լուկիվիչի. իսկ փոխանդամներ՝ Օդեսուտով, Ա. Բաբոյ, Մուրիսով, Մալիսին և Բաղդասարով:

ԲԱՊՈՒՆԻՑ հաղորդում են «Новое Обозрение» լրագրին, որ այնտեղ եւս ձեռնարկված է քաղաքային դոմայի գործերի ընդլայնում: Քննութիւնը յանձնված է փոխ-նախագահութեան խիւղիկին:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են. «Երևանի նախագի ժողովրդական դպրոցների տեսչի կարգադրութեամբ այստեղ բացվեց երկուսեան երկուս դպրոց: Գործը պէտք է պահի մասամբ եկեղեցու եկամուտով և մասամբ աշակերտների թոշակադրումով, որի մասին արդէն ստացված է թուղթութիւն: Անցեալ կիրակի, Վե. սելովգորովի հրամանով, ծխակրթիկները ժողովրդական եկեղեցու սենեակում՝ որոշելու նոր բացուելը դպրոցների դրամական պահանջութիւնը, սակայն գործակալը ոչ թէ միայն անտարբերութեամբ է վերաբերվում դէպի դպրոցներ, այլ մինչև իսկ չէ կամենում կատարել ծխակրթիկներ որոշումը՝ արձանագրութիւնը ստուգելու տալու: Վե. սելովգորով նոր բացված դպրոցի գլուխներն առ. ժամանակ պահպանելու համար պատուիրել է սպանդանոցի և կշռի տարե-

կան եկամուտները եկող յոճակարի մէկից տալ դպրոցին ժամանակաւորապէս: Արդէն նշանակված է աւագ-ուսուցիչ և սկսված է աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը»:

ՎԱՂԱՊԻՑ մեզ գրում են. «Թանախտի, այդ սոսկալի հիւրի, առաջին անգամ համարձեք դասաւարտելու Կանչիլիի ձեռք առած միջոցները շնորհակալութեան են արժանի: Նա կանչելով իր գաւառի բոլոր հասկացողներին ու պաշտօնաւոր անձանց, պարտաւորեցրել է ամեն տեղ սանիտարական խմբեր կազմել և հսկել մաքրութեան վրա: Նա մատչելի օրինակներով մի քանի կենսական խրատներ է տուել»:

ԹԵՆԴՈՒՍԻԱՅԻՑ մեզ գրում են. «Նոյեմբերի 1-ին ս. Սարգիս եկեղեցում առաջին անգամ երգեց պ. Կարա-Մուրզայի պատրաստած խումբը՝ պ. Նիկանեանի ներդաշնակած քառաձայն պատարագի արարողութիւնը՝ ղեկավարութեամբ ուսուցիչ Ս. Խանդանի: Պատարագի կիսին Ե. զիչէ վարդապետ Մուրադեան քարոզ խօսեց՝ և ի միջի այլոց ասաց. «Շատերը բաւականաւորում են միայն եկեղեցում մի քանի մոմ վառելով ու երեսը խաղաղեցրելով, երբեմն ժողով են վառում սուրբերի առաջ, որպէս զի վերջինս ներս միջնորդ հանդիսանան՝ օգնելու ուրիշներին խաղաղութեամբ ապրելու: Ի՞նչ, այդ բոլորը դէմ է Գրիստոսի քարոզած վարդապետութեան և որ զլիստոսն է ձեւական բաներ են: Մի բաւականաւորեք իրօնական ձեւերը կատարելով, եղէք խաղաղ քրիստոնեայ և օգնեցէք ձեր թշուառ եղբայրներին...»: Պատարագի վերջը խումբ բաղմութեան ներկայութեամբ կատարվեց հոգեհանգիստ հանդուցեալ Անդրիաս Արծուհու յիշատակին: Հասարակութեան մէջ, ի միջի այլոց, երևում էին և օտարազգի մարդիկ, որոնք եկել էին լսելու հայոց քառաձայն եկեղեցական երգեցողութիւնը: Աւելորդ չէ յիշել նաեւ, որ առանձին համարանքով վերաբերվեց գործին նաեւ մեր յայտնի նկարիչ Յ. Ալիազովսկին»:

ՇԱՀԱՍԱՐ գիւղից մեզ գրում են. «Զորս տարի առաջ Շահասարի հասարակութիւնը համարաւորական թիւրք կազմեց գիւղում միջառնա ուսումնարան բաց անելու մասին, բայց յետոյ թշնամի խմբերի բաժանվելով խափանեցին նոր ուսումնարանի բացվելը: Երկու տարի այդպէս քաշ տալուց յետոյ, ակամայից զիջան ժողովրդական ուսումնարանների տեսչի պահանջարկի առաջ և 1897—98 ուսումնարանական տարվա ընթացքում պարտաւորեցան վճարել ուսուցչի վարձ՝ տարեկան 300 ռուբլի: Սակայն հին ուսումնարանի շինութիւնն անյարմար լինելով, ստիպված են նոր ուսումնարան շինել, բայց մինչև նորի աւարտելը, մեր աւագ քահանայ Սարգիս վարդապետ Շաղբեան իր տան մի մասը յատկացրեց ուսումնարանի համար, որ այժմ ուսանում են հայերէն և ռուսերէն լեզուն՝ 30—40 աշակերտներ, որոնց կրօնատոյցն է նոյն Շաղբեան վարդապետը»:

ՎԱՂԱՊԻՒՍ վերին-Աղդան գիւղից մեզ հաղորդում են. «Հայի պակասութիւնն այս տարի ևս զգալի է մեզանում. դեռ աշուն է, բայց ցորնի թաղարը (9 պոլ) արդէն հասել է 10 ռուբլու: Այս բանին ոչ պակաս նպաստում են ամբարտաւոր պարագիտները, որոնք կայոցին ամենաշուրջ գնով ժողովել են գիւղացու ունեցած չուղեցածը: Եկող տարին էլ այնքան յոյսեր չի տալիս, որովհետեւ աշունն առանց անձրևների է անցնում»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՈՒՂԱՌԻԹԻՒՆ

Վերջին չորս-հինգ տարիներում մեծ ժողովրդականութիւն էր վայելում Ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Հանտո: Սեմբը մեծ զովաւանքով էին խօսում այդ դիպլոմատի մասին, լրագրական ներքողները շատ անգամ ոգևորութեան այն աստիճանին էին հասնում, որ Հանտո դատվում էր նոյն իսկ հանձարեղների շարքում: Ինքը, մինիստրն էլ, սիրում էր յաճախ մատնացրի անել իր քաղաքականութեան յաղթանակների վրա: և այդ յաղթանակներից մէկն էր այն, որ Ֆրանսիան կարողացաւ հանդիմանալ արեւելեան հրոյին, այսինքն խնդրեց քրիստոնեաների դատը: Յայտնի է, որ Կ. Պօլսի ֆրանսիական դեսպան Կամբոն, չը նայած իր նրբամտութեան, իր եռանդին, դուր աշխատեց հանել Ֆրանսիան այն դիրքին, որ ստեղծել էր Հանտո: Արտաքին գործերի մինիստրը կարողացաւ այնքան հաստատ մնալ իր թրջափորութեան մէջ, որ սուլթանից չընաշան ստացաւ,

իսկ Բոչֆօրից—Հանտո-փաշա՝ պատաւոր տնտրուր: Այժմ Պարիզից հաղորդում են, որ արտաքին գործերի նոր մինիստր Բէլկասէ արեւելեան քաղաքականութեան մէջ իր նախորդի քաղաքականութեան հետեւում, այլ, ընդհակառակն, գործում է նրան հակառակ: Կրեոական հարցի վերաբերմամբ Բէլկասէ այնպիսի խիստ ոճով խօսեց Պարիզի օսմանեան դեսպանի հետ, որ փաղիշահի ներկայացուցիչը մնաց զարմացած և նոյն իսկ նկատեց, որ առաջին անգամն է այդպիսի փոփոխութիւն տեսնում Պարիզի քաղաքական աշխարհում:

Բայց թիւրք դիպլոմատի դարձանք միանգամայն անտեղի էր: Ֆրանսիան հաւանաւ, թէ և բաւական ուշ, որ սուլթանին կրիթական ժամերում ցոյց տուած հովանաւորութիւնը միմիայն Կերմանիայի օգտին ծառայեց: Հանտոսի «փայլուն» գործունէութեան հետեւանքն այն եղաւ, որ լրագրներն այժմ խօսում են, թէ կընթացած է թիւրք-գերմանական դաշնակցութիւնը: Եթէ այս նորութիւնը նոյն իսկ առասպել էլ չի, ինչպէս հաւատացնում են գերմանական լրագրները, բայց և այնպէս, Ֆրանսիայի համար այժմ կատարելապէս պարզ պիտի լինի, որ բաւական աշխատեցաւ, բայց ոչինչ կալաւ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ շարունակել մընալ այդ գործիքն ամէն մէջ՝ չէր կարող ոչ մի միւս նիստը: պէտք էր փոխել այդ ուղղութիւնը՝ խլելով Հանտոսի դափնիները...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պարիզից հեռագրում են նոյեմբերի 4-ից, «Երէկ, երկուշաբթի ժամը 8-ից, Իրէֆֆուսի Գլխաւայի նախագահութիւնը միջոցով յայտնեց» նրա գործի առաջիկայ վերաբնութեան մասին: Վոյտիսները մինիստրը մի արտակարգ սուր հանդակ կողարկի Սառմայի կողմին, և կը յանձնի Իրէֆֆուսին վճարվող դատարանի հարցական լիթերը՝ համապատասխան դոկումենտներով: Փաստաբան Լարթի խնդրում է թող տալ իրան ուղարկել նաեւ իր օգնականին: Վրձ-նալինը դատարանի այս որոշումն համարվում է իբրև նշան, թէ Իրէֆֆուս անմեղ է ծանալված, մի և նոյն ժամանակ Լոնդոնից հեռագրում են հետեւեղ կարտը լուրը. «Daily News» լրագրը հաղորդում է, թէ Շվարցօպպին յայտնել է, թէ այն պատերազմական դոկումենտներ, որոնց վրա հիմնված է Իրէֆֆուսի մեղադրութիւնը, նա ստացել էր Էտտերօպպից, Հանրից և Պատի-դը-Վալմից: Այդ երեքը լրտեսներ էին, և որովհետեւ Իրէֆֆուս, որ այդ ժամանակ մտել էր ընդհանուր շտաբը արգելք էր լինում նրանց գործողութիւններին, ուստի նրանք որոշեցին վրէժ հանել նրանից՝ մեղադրելով նրան մատնութեան մէջ»:

—Կ. Պօլսից հաղորդում են «Memorial Diplomatique» լրագրին, որ սուլթան Աբդուլ-Համիդի առողջութիւնը շատ անդունացուցիչ է: Չը նայելով իր մարմնական տանջանքներին՝ սուլթանը երբեմն արտակարգ ջանքեր է անում օտար պետութիւնների այս և այն ներկայացուցչին ընդունելու համար:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ալեքսանդր Մակեդոնացին և Երւրդեբը. «Բիւրդերին նոյն իսկ մեծն Ալեքսանդր Մակեդոնացին չը կարողացաւ յաղթել»—այն այն պատատիւներ, որ նորեւս թիւրքաց արտաքին գործերի մինիստր Թէֆֆիկ փաշան սուլթանին հրամանով տուեց եւրոպական պետութիւններից մէկի ներկայացուցչին, երբ սա գնացաւ վեր էր այն հարստարարութիւնների դէմ, որոնց նիւթարկում են խնդր քրիստոնեաները Փոքր-Ասիայում քրիստոնե կողմից: Այդ պատասխանով փաղիշահի կամեցել էր յայտնել դեսպանին, որ ինքը շատ մեծ ցանկութիւն ունի պատմել քրիստոնե, բայց անգոր է: Անցնում է մի քանի օր. յանկարծ, ճիշդ նոյն քաղցին, երբ սուլթանը փառանքը ընդունելութիւն էր ցոյց տալին գերմանական Վիլհելմ կայսրին, երբ մուսլիմանները հրատարակում էին վերջինս «իսլամի հօգը բարեկամ»։—Վանից հեռագրի է ստացվում, թէ Վիլհելմ կայսրի հպատակ, գերմանացի գիտնական Բեռլին ենթարկվել է քրիստոնե քարձակման և վերաւորվել Այդ դէպքի մանրամասնութիւնները յայտնի են Մշակի ընթերցողներին: Վատաղած սուլթանը խոկոյն այնպիսի զարնութիւն հրամաններ է տալիս Վանի վայրին, որ 24 ժամվալ ընթացքում այն քրիստոնե, որոնց Ալեքսանդր Մակեդոնացին չէր կարողանայ յաղթել, կալանաւորվում են և ամենախիստ պատմի ենթարկվում. յափշտակված իրերը գտնվում են և յանձնվում Բեռլին այնպիսի արագութեամբ, որ վերջինս ստիպվում է հեռագրով յայտնել իր դեսպանին, թէ հիացած է թիւրքաց ոտարկանութեան ճարտարութեան վրա: Այս վերջին հանգամանքը առիթ է տուել եւրոպական մի լրագրի միամտաբար քաջալանելը. «Ուրեմն քրիստոնե այնքան էլ անպիտի չեն, որքան քրիստոնե ևս կարելի է գտնել և պատմել. ուրեմն կարելի է պահանջել, որ հայերին տանջող քրիստոնե իրանց օրինաւոր պատիւը կրեն»։ Միամիտ հրապարակասուր մտածել է

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.